ճակի մասին եւ, ընդհակառակը, Ժորտանիայի լաւատեսութիւնը:

Բայց հետաքրքրականը այն վերաբերումն է ,որ ցոյց է տալիս զօր. Ուօկկերը «անկախ» Վրաստանում եւ «անկախ» Վրաստանի կառավարութեան նուաստացուցիչ դիրքը անգլիական զօրավարի առջեւ: Զօր. Ուօկկերը իրեն պահում է այնպէս, կարծես, այդ երկրի մարդպանը լինի — անհունօրէն կոպիտ, կամայական ու արհամարհական կերով: Արտաքնապէս քաղաքավարի ձեւերի տակ՝ տեսնում ես անգլիացի դաղութային սպային, որ իր շրջապատի մէջ իրեն կէս-աստծու տեղ է դընում: Այսպէս է ուզում իմ քմահաճոյքը — ահա նրա դիրքը, եւ իր քմահաճոյքը «Մեծ-Բրիտանիայի վարկն» է: «Բոռբա»ն համարձակուել է կծու խօսք ասել անգլիացիների երկդիմի քաղաքականութեան մասին — փակեցէ՛ք այդ թերթը: Վրաստանի ներկայացուցիչ Գեռեւանովը միամտութիւն է ունեցել հաղորդելու իր կառավարութեան, որ անգլիացի ընդհանուր-նահանգապետը իրեն չի ընդունել՝ ասելով, թէ տանը չէ, մինչդեռ իր եկած ժամանակը տանն է եղել — հեռացրէ՛ք պաշտօնից այդ յանդուգն դնդապետին. ինչպէ՞ս է համարձակւում նա հաւատալ իր աչքին եւ ոչ անգլիացի նահանգապետի խօսքին: Փոթիում վրաց զինուորական ներկայացուցիչը զօրավարի համար անհաճոյ կարգադրութիւններ է արել — պատժել այդ սպային: Վերջապէս, վրացական կառավարութիւնը բողոքի դիր է ուղարկել անգլիական հրամանատարութեան եւ այդ դիրը տուել է մամուլին — ինչպէ՞ս կարելի է հանդուրժել այդպիսի բան. կառավարութիւնը հրապարակով պէտք է ներողութիւն խնդրի, այլապէս... չէ՞ որ բրիտանական պատիւն է անարգուած: Եւ խեղճ կառավարութիւնը ստիպուած է տեղի տալ, նուաստանալ:

Իսկ այդ զօրավարների քաղաքականութիւնը...Բաթումի շրջանում նրանք դրդում են մահմեդականներին. հիւսիսում առաջ են քշում ռուս կամաւորականներին. Վրաստանի վրայով զէնք ու ռազմամթերք են ուղարկում Վրաստանի դէմ պատերազմող Դենիկինին. Արտահանում ոտքի են հանում մահմեդականներին, եւ ամէն տեղ երեւում է անգլիական սպաների մատը: Ու երբ Ժորտանիան փորձում է մատնանշել այդ հանգամանքը, պատասխանը լինում է. «ճիշդ չէ». վրաց կառավարութիւնը ներկայացնում է իբրեւ ստախօս:

Մի ուրիշ տեսակցութեան ժամանակ Ժորտանիան դանդատւում է զօր. Քորբին. «Այս օրերս այստեղ է եկել զօր. Միլնը, եւ չընդունեց մեր ներկայացուցիչներին: Մենք սովոր չենք այդպիսի վերաբերմունքի»: Եւ նորից նոյն երգը. «Ես անձամբ 25 տարի շարունակ եւ շատերը այժմեան կառավարութիւնից պըրոպագանդ ենք արել յօգուտ անգլիացիների»:

Մի այլ տեսակցութեան միջոցին Ժորտանիան դարձեալ դառնօրէն դանդատւում է, թէ անգլիացիները շատ կոպիտ են վարւում վրաց պաշտօնեաների եւ, յատկապէս, երկաթուղային ծառայողների հետ. «ծեծում են երկաթուղու դործակատարներին եւ բանը հասցրին այնտեղ, որ պաշտօնեաները սպառնում են դործադուլ անել»:

Սակայն եւ այնպէս, վրացի ղեկավարները շատ դործնական մարդիկ են. նրանք ուզում են նաղտացնել, չօշափելի ձեւի վերածել իրենց «անդլիասիրութիւնը», միայն վարանում են, չեն կարողանում հասկանալ, թէ ի՞նչ են ուզում իրենցից անդլիացիները: Մարդիկ դերադոյն ճիդ են թափում, բայց չեն յաջողում:

Այս տեսակէտից չափազանց բնորոշ է արտաքին դործոց նախարար Ե. Գեղեչկորիի 1919 թ. սեպտ. 4 դաղտնի խօսակցութիւնը Անդլիայի արտակարդ կոմիսար Ուօրտրոպի հետ:

Գեղեչկորին տեսնում է Ուօրտրոպի հետ կառավարութեան յանձնարարութեամբ՝ նպատակ ունենալով «ճշդրիտ տեղեկութիւններ տալ վերջին ժամանակներս Վրաստանում կատարուած բոլոր դէպքերի մասին»: Եւ այդ անում է, որպէսզի Ուօրտրոպին հեռու պահէ սխալներից, «կողմնակի մարդկանց հասցրած անճիշդ տեղեկութիւններից»: Մեծ դժբախտութիւն է, ասում է նա, որ «Վրաստանի կառավարութիւնը, հակառակ թափուած բոլոր ճիդերի, չի կարողացել մինչեւ այժմ բաղձալի փոխյարաբերութիւն հաստատել Անդրկովկասի անդլիական հրամանատարութեան հետ»: Պատճառը այն է, որ չարամիտ մարդիկ սխալ ներշնչումներ են անում անդլիացիներին, եւ